

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեպական համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարթում ենք հաջողություն:

**1 Թվարկված քույսերից ո՞րն ունի առանցքային արմատային համակարգ.**

- 1) մորին
- 2) արևածաղիկը
- 3) եղան լեզուն
- 4) գորտնուկը

**2 Ի՞նչ բաժիններ են տարրերում պլանարիայի մարտողական համակարգում.**

- 1) բերանային անցք, կլան, փակ ծայրով ավարտվող աղիք
- 2) բերան, կլան, կերակրափող, կտնառք, աղիք
- 3) բերան, կերակրափող, ստամոքս, աղիք, կոյանոց
- 4) բերան, առջևի, միջին, հետին աղիքներ, հետանցք

**3 Որո՞նք են պատկանում ստորակարգ քույսերի ենթաքավորությանը.**

- 1) մամուռները
- 2) ջրիմուռները
- 3) գետնամուշերը
- 4) մերկասերմերը

**4 Մնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) արտազատում են միզանյոթ
- 2) ավտոտրոֆ օրգանիզմներ են
- 3) ունեն քլորոֆիլ
- 4) ունեն սահմանափակ աճ

**5 Որո՞նք են միջատների արտազատության օրգանները.**

- 1) մալպիզյան անոթները
- 2) երիկամները
- 3) կծկուն վակուոլները
- 4) նախաերիկամները

**6 Ի՞նչ բաժիններից է կազմված սողունների ողնաշարը.**

- 1) պարանոցային, կրծքային, գոտկային, սրբանային, պոչային
- 2) պարանոցային, կրծքային, իրանային, սրբանային, պոչային
- 3) պարանոցային, իրանային, սրբանային, պոչային
- 4) պարանոցային, իրանային, գոտկային, սրբանային, պոչային

7

Ո՞րն է համապատասխանում քոչունների բազմացման օրգաններին.

- 1) զույգ ձվարաններ և կենտ սերմնարան
- 2) կենտ ձվարան և զույգ սերմնարաններ
- 3) կենտ ձվարան և կենտ սերմնարան
- 4) զույգ ձվարաններ և զույգ սերմնարաններ

8

Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու գանգի վերաբերյալ.

- 1) գանգում կան երկու շարժուն միացումներ և մեկ շարժուն ոսկոր
- 2) գանգում կան երկու շարժուն ոսկորներ և երկու շարժուն միացումներ
- 3) գանգում կան մեկ շարժուն ոսկոր և մեկ շարժուն միացում
- 4) գանգը կազմող ոսկորները միացած են շարժուն և կիսաշարժուն միացումներով

9

Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B<sub>2</sub> թերվիտամինոզի դեպքում.

- 1) տեսողության խանգարում, բերանի լորձաթաղանթի ախտահարում
- 2) ռախիտ, մկանային ցավեր
- 3) արյունազեղումներ, հավկուրություն
- 4) սիրտ-անոթային և նյարդային համակարգերի աշխատանքի խանգարում

10

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժինն է ապահովում շնչառական շարժումների կամային կարգավորումը խոսելու ընթացքում.

- 1) ուղեղիկի կեղևը
- 2) միջանկյալ ուղեղը
- 3) երկարավուն ուղեղը
- 4) ծայրային ուղեղի կեղևը

11

Ո՞ր հորմոնի գերարտադրությամբ է պայմանավորված բազեղովյան հիվանդությունը.

- 1) գլյուկագոն
- 2) ադրենալին
- 3) թիրօքսին
- 4) ինսուլին

12

Մարդու լսողական զգայարանի ո՞ր թաղանթի վրա են տեղակայված լսողական ընկալիչները.

- 1) թմբկաթաղանթի
- 2) հիմային
- 3) ձվաձև պատուհանի
- 4) կլոր պատուհանի

13

Ո՞ր տիպի իմունիտետն է ձևավորվում մարդու օրգանիզմում քուժիչ շիճուկ ներարկելիս.

- 1) բնական բնածին
- 2) արհեստական ակտիվ
- 3) արհեստական պասիվ
- 4) բնական ձեռքբերովի

14

Ո՞ր գործառույթը չի իրականացնում աղաթթուն մարդու ստամոքսում.

- 1) սալիտակուցների ֆերմենտների հետ շփման մակերեսի մեծացում
- 2) թթվային միջավայրի ստեղծում
- 3) սալիտակուցների պեպտիդային կապերի ճեղքում
- 4) մանրէների ոչնչացում

15

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում միջավայրում ջերմաստիճանի անկման դեպքում.

- 1) աճում է արյան հոսքը դեպի մաշկ, իսկ մարմնի ջերմատվությունը նվազում է
- 2) լայնանում են մաշկի արյան անոթները և մեծանում է այնտեղ մղվող արյան քանակը
- 3) մաշկի արյան անոթները լայնանում են, արյան հոսքը արագանում է, մարմնի ջերմատվությունը մեծանում է
- 4) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը, նվազում է մարմնի ջերմատվությունը

16

Ի՞նչ գործառույթ չի կատարվում քթի խոռոչում.

- 1) օդի խոնավացում
- 2) օդի մեջ եղած հոտերի տարրերակում
- 3) օդի տաքացում
- 4) օդի փոշեգերծում

17

Ո՞ր գործոններն են դանդաղեցնում սրտի աշխատանքը.

- 1) աղբենալին և թիրօքսին հորմոնները
- 2) գլյուկազոնը և կալցիումի իոնները
- 3) կալիումի իոնները և ացետիլսուլինը
- 4) կալցիումի իոնները և ինսուլինը

18

Մարդու երիկամի նեֆրոնում մազանոթային քանի<sup>շ</sup> ցանց կա և որտե՞ղ է (Են) տեղակայված.

- 1) պատիճի խոռոչում գտնվող և ոլորուն խողովակները պատող մազանոթային երկու ցանց
- 2) երիկամային խողովակները պատող մազանոթների մեկ ցանց
- 3) մազանոթների մեկ ցանց, որը պատում է միաժամանակ պատիճը և երիկամային խողովակները
- 4) պատիճի խոռոչում գտնվող մազանոթների մեկ ցանց

19

Բջջային կենտրոնի ցենտրիոնները.

- 1) իրագործում են բջիջների տեղափոխումը հեղուկ միջավայրում
- 2) մկանաբեկերի կծկման կառուցվածքներ են, գտնվում են բջջակորիգում
- 3) մասնակցում են սպիտակուցի սինթեզին
- 4) մասնակցում են բաժանման իլիկի առաջացմանը

20

Ո՞րն է նախակորիգավոր.

- 1) բակտերիաֆագը
- 2) ամեռան
- 3) ծխախոտի մոզաիկայի վիրուսը
- 4) պալարաբակտերիան

21

Ի՞նչ տեղի չի ունենում ֆոտոսինթեզի լուսային փուլում.

- 1) ածխաջրերի սինթեզ
- 2) ԱԵՖ-ի սինթեզ
- 3) ջրի քայլայման հետևանքով մոլեկուլային թթվածնի առաջացում
- 4) ատոմային ջրածնի առաջացում

22

Ինչո՞ւ գենետիկական կողը վերածածկվող չէ.  
քանի որ՝

- 1) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն
- 2) յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) գեների միջև կան «ընդհատումներ»
- 4) միևնույն ամինաթթուն կարող է գաղտնազրվել մեկից ավելի եռյակներով

23

Ի՞նչ կապ է առաջանում սպիտակուցի մոլեկուլում մեկ ամինաթթվի կարբօքսիլ խմբի ածխածնի և մյուս ամինաթթվի ամինախմբի ազոտի միջև.

- 1) ջրածնային
- 2) սուլֆիդային
- 3) հիդրոքոք
- 4) կովալենտ

24

Էներգիայի արտաքին աղբյուր չի պահանջում.

- 1) ջրի տեղաշարժը թաղանթի միջով
- 2) ֆագոցիտողի գործընթացը
- 3) գլյուկոզից գլիկոզենի առաջացման գործընթացը
- 4) մկանային կծկումը

25

Որքա՞ն է ոլորի սերմերի դեղին գույնը և հարք մակերևույթը պայմանավորող գենոտիպերի առավելագույն թիվը.

- 1) 4
- 2) 9
- 3) 16
- 4) 3

26

Ի՞նչ է պարունակում եզ դրոզոֆիլ պլողաճանճի յուրաքանչյուր ձվաբջիջը.

- 1) երեք X-քրոմոսոմ և մեկ առιտոսոմ
- 2) վեց առιտոսոմ և երկու սեռական քրոմոսոմ
- 3) յոթ առιտոսոմ և մեկ սեռական քրոմոսոմ
- 4) երեք առιտոսոմ և մեկ X-քրոմոսոմ

27

**Ո՞րն է քրոմոսոմի դուպլիկացիայի պատճառը.**

- 1) հոմոլոգ քրոմոսոմների միաձուլումը մեկ մեծ քրոմոսոմի ձևավորմամբ և դրա կրկնապատկումը
- 2) քրոմոսոմի բաժանումը ցենտրոմերներ պարունակող երկու հավասար հատվածների
- 3) ոչ հոմոլոգ քրոմոսոմների միաձուլումը մեկ մեծ քրոմոսոմի ձևավորմամբ
- 4) անհավասարաչափ տրամախաչումը

28

**Ի՞նչն է բնորոշ ալելային գեներին.**

- 1) տեղադրված են ոչ հոմոլոգ քրոմոսոմներում
- 2) մեյօզի ժամանակ հայտնվում են միևնույն գամետում
- 3) կարող են պայմանավորել տվյալ հատկանիշի տարբեր դրսևորումների զարգացումը
- 4) պայմանավորում են տարբեր հատկանիշների զարգացումը

29

**Ինչպե՞ս է կոչվում գենոտիպի փոփոխման հետ չկապված փոփոխականությունը.**

- 1) անորոշ
- 2) մոդիֆիկացիոն
- 3) համակցական
- 4) մուտացիոն

30

**Նշվածներից ո՞րն է կայունացնող ընտրության ազդեցության արդյունք.**

- 1) բունաքիմիկատների նկատմամբ կենդանիների կայունության առաջացումը
- 2) ձիու էվոլյուցիան՝ հնգամատ վերջույթից մինչև միամատը
- 3) կղզիներում ապրող միջատների անթև ձևերի առաջացումը
- 4) բույսերի ծաղիկների մասերի խիստ հարմարվածությունը փոշոտող միջատների չափերին

31

**Ի՞նչն է կազմում էկոլոգիական համակարգի կենսազանգվածը.**

- 1) արեալի որոշակի հատվածում երկար ժամանակ գոյություն ունեցող մի տեսակի առանձնյակների, ջրի, օդի, հողի զանգվածների ամրողացությունը
- 2) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 3) միավոր մակերեսի վրա կամ միավոր ծավալում բնակվող տվյալ տեսակի առանձին պոպուլյացիան
- 4) տվյալ կենսաերկրացենոզը կազմող բույսերի կամ կենդանիների տեսակների ամբողջությունը

32

Ի՞նչը բնորոշ չէ ռեղուցենտրոնիկան.

- 1) վերարտադրում են պրոդուցենտրոնի սննդառության համար անհրաժեշտ նյութեր
- 2) օգտագործում են արևի էներգիան և սինթեզում են անհրաժեշտ օրգանական նյութերը
- 3) սնվում են մահացած օրգանիզմների մնացորդներով
- 4) քայլայում են բարդ օրգանական միացությունները

33

Թվարկված օրգաններից որո՞նք են հոմոլոգ.

- 1) ձկների և խեցգետնի խոհկները
- 2) կարտոֆիլի պալարները և հովտաշուշանի կոճղարմատները
- 3) բոչունների, չղջիկների և միջատների թևերը
- 4) խլուրդի և իշախառանչ արջուկի փորող վերջույթները

34

Ի՞նչն է համարվում էվոլյուցիայի ուղղորդող և շարժիչ ուժ.

- 1) միջավայրի պայմանների բազմազանությունը
- 2) միջավայրի հանդեպ օրգանիզմների հարմարվածությունը
- 3) բնական ընտրությունը
- 4) հատկանիշների տարամիտումը

35

Ինչի՞ է բերում պոպուլյացիայի խտության օպտիմալից պակաս նվազումը.

- 1) պոպուլյացիայի ծաղկմանը
- 2) բեղունության մեծացմանը
- 3) պոպուլյացիայի պաշտպանական ռեակցիաների բուլացմանը
- 4) ներտեսակային գոյության կովի սրմանը

36

Արտաքին միջավայրի ո՞ր գործոնն է պաշտպանում կենդանի օրգանիզմները կարճալիք ուղղամանուշակագույն ճառագայթներից.

- 1) ամպերը և քամիները
- 2) մթնոլորտի օգնային շերտը
- 3) մթնոլորտի ազոտը
- 4) օդում առկա ջրի գոլորշիները

- (37-38) Խաչասերել են  $AaBbCCddEe \times AabbccDdEE$  գենոտիպերով առանձնյակներին: Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին երկուսում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

37

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 54
- 2) 36
- 3) 24
- 4) 16

38

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 16
- 2) 36
- 3) 54
- 4) 24

(39-40) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածի երկարությունը  $5,44 \cdot 10^{-6}$  մետր է, մեկ նուկլեոտիդի երկարությունը՝  $0,34$  նանոմետր, իսկ թիմինային նուկլեոտիդի քանակն այդ հատվածում  $7520$  է:

39

Գտնել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում նուկլեոտիդների ընդհանուր քիվը.

- 1) 32000
- 2) 15040
- 3) 8000
- 4) 16000

40

Գտնել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում ցիտոզինային նուկլեոտիդների քանակը.

- 1) 16960
- 2) 8480
- 3) 4240
- 4) 7520

41

Գտնել հասուն ողնաշարավոր կենդանիների նշված դասերի (նշված են աջ սյունակում) և նրանց կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների (նշված են ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

#### Առանձնահատկություններ

#### Դաս

- |                                                                       |                   |
|-----------------------------------------------------------------------|-------------------|
| A. սրտով հոսում է միայն երակային արյուն                               | 1. ուկրային ձկներ |
| B. մաշկը մերկ է և խոնավ                                               | 2. երկվենցաղներ   |
| C. կմախրում ունեն պարանոցային, իրանային, սրբանային և պոչային քաժիններ |                   |
| D. կմախրում ունեն պարանոցային մեկ ող                                  |                   |
| E. սիրտը երկխորշ է                                                    |                   |
| F. միզածորաններով մեզն անցնում է կոյանոց                              |                   |
| G. ունեն միայն ներքին ականջ                                           |                   |
| H. ունեն արյան շրջանառության երկու շրջան                              |                   |

42

Ո՞ր գործառույթը (նշված է ձախ սյունակում) մարդու ծայրամասային նյարդային համակարգի ո՞ր բաժնի (նշված է աջ սյունակում) կողմից է իրականացվում: Նշել համապատասխանությունն ըստ հերթականության.

#### Գործառույթ

- A. մեծացնում է սրտի կծկումների ուժը
- B. նյարդավորում է միջաձիգ զոլավոր մկանները
- C. քուլացնում է ջրի հետադարձ ներծծումը երիկամներում
- D. լայնացնում է աչքի բիբը
- E. նվազեցնում է սրտի կծկումների հաճախականությունը
- F. ապահովում է կամային շարժումների իրականացումը
- G. ուժեղացնում է մակերիկամներում աղբենալինի արտադրությունը

#### Ծայրամասային նյարդային համակարգի բաժին

- 1. մարմնական նյարդային համակարգ
- 2. վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ բաժին
- 3. վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժին

43

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) ո՞ր կենսապոլիմերներին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

#### Հատկանիշ

- A. ամենաերկար կենսապոլիմերներն են
- B. մոնումերներն իրենց կազմում ունեն ածխաջրի, անօրգանական թթվի և ազոտ պարունակող միացության մնացորդներ
- C. վնասագերծում են հակածիններին
- D. կատարում են պաշտպանական գործառույթ
- E. արագացնում են քիմիական ռեակցիաները
- F. ընդունակ են ինքնակրկնապատկման
- G. հանդես են գալիս մատրիցայի դերում
- H. մտնում են բջջաբաղանքների կազմության մեջ

#### Կենսապոլիմերներ

- 1. պոլիսուկլեոտիդներ
- 2. պոլիպեպտիդներ

44

Ո՞ր բակտերիան (նշված է աջ սյունակում) ո՞ր պրոցեսն է (նշված է ձախ սյունակում) իրականացնում: Նշել ճիշտ համապատասխանությունը.

Պրոցես

Բակտերիաներ

- |                                                                  |                    |
|------------------------------------------------------------------|--------------------|
| A. մոլեկուլային ազոտի առաջացում                                  | 1. ազոտֆիքսող      |
| B. ազոտական թթվի առաջացում                                       | 2. դենիտրիֆիկացնող |
| C. ամոնիակի առաջացում ազոտ պարունակող օրգանական միացություններից | 3. ամոնիֆիկացնող   |
| D. ամոնիակի սինթեզ մոլեկուլային ազոտից                           | 4. նիտրիֆիկացնող   |
| E. ազոտային թթվի առաջացում                                       |                    |

45

Սեյզի ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) ո՞ր փուլում է (նշված է աջ սյունակում) ընթանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Պրոցես

Սեյզի փուլ

- |                                                                  |               |
|------------------------------------------------------------------|---------------|
| A. քրոմատիդների տարամիտում                                       | 1. թելոֆազ II |
| B. քրոմատիդների ապապարուրում,<br>բաժանման իլիկի քայքայում        | 2. անաֆազ I   |
| C. հնմոլոգ քրոմոսոմների տարամիտում                               | 3. անաֆազ II  |
| D. տրամախաչում                                                   | 4. պրոֆազ I   |
| E. հնմոլոգ քրոմոսոմների դասավորում իլիկի<br>հասարակածային գոտում | 5. մետաֆազ I  |
| F. հնմոլոգ քրոմոսոմների հպում և ոլորում                          |               |

46

Ի՞նչ հաջորդականությամբ են անցնում նյարդային ազդակները ռեֆլեքսային աղեղով  
մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ազդակի հաղորդում շարժողական նեյրոնին
2. գրգիռի վերափոխում նյարդային ազդակի
3. նյարդային ազդակի հաղորդում զգայական նեյրոնի արսունով
4. մատի հպում տաք առարկայի
5. նյարդային ազդակի հաղորդում ներդիր նեյրոնին
6. նյարդային ազդակի հաղորդում առջևի արմատիկի կազմի մեջ մտնող  
նյարդաթելով
7. մկանների կծկում

47

Մարդու օրգանիզմում ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը սրտի մեկ բոլորաշրջանի ընթացքում՝ սկսած արյան սիրտ անցման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. փեղկավոր փականների բացում և արյան հոսք դեպի փորոքներ
2. կիսալուսնաձև փականների բացում
3. արյան հոսք դեպի առրտա և թոքային զարկերակ
4. փորոքների կծկում
5. փեղկավոր փականների փակում և դեպի նախասրտեր արյան հոսքի կանխում
6. նախասրտերի կծկում

48

Ի՞նչ հաջորդականությամբ է լույսն անցնում մարդու աչքի կառուցվածքային տարրերով: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բիբ
2. ապակենման մարմին
3. ակնաբյուրեղ
4. եղջերաբաղանք
5. ցանցաբաղանք

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հերթականությունը.

1. փոշոտում
2. փոշեխողովակի առաջացում
3. սերմի առաջացում
4. սպերմիումի և ձվաբջիջի միաձուլում
5. միկրոսպորի առաջացում
6. փոշեխողովակի ներբափանցում սաղմնապարկ
7. զեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում

50

Ածխածնի շրջապտույտում ինչպիսի՞ն է գործընթացների հաջորդականությունը՝ սկսած անկենդան բնությունից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. օպայի առաջացում բուսական բջիջներում
2. գլիկոզենի առաջացում կենդանական բջիջներում
3. գլյուկոզի առաջացում բուսական բջիջներում
4. գլյուկոզի առաջացում կենդանական բջիջներում մարսողության ընթացքում
5. ածխաթթու գազի կապում ֆոտոսինթեզի ընթացքում

51

Ի՞նչ հաջորդականությամբ է Թ. Մորգանը բացահայտել մեկ քրոմոսոմում տեղակայված գեների ժառանգման առանձնահատկությունները: Նշել ճիշտ հերթականությունը.

1. պտղաճանճի՝ գորշ մարմնով, նորմալ երկարությամբ թևերով և մուգ մարմնով, սաղմնային թևերով հատկանիշներով, մաքուր գծերին պատկանող առանձնյակների խաչասերում
2. գեների շղթայակցված ժառանգման օրենքի ձևակերպում
3. առաջին սերնդի երկինտերոզիզու էզի խաչասերում ռեցեսիվ հատկանիշներով արուի հետ
4. միակերպության երևույթի դրսերում
5. երկրորդ սերնդում վերահամակցված հատկանիշներով առանձնյակների նկատմամբ ծնողական հատկանիշներով առանձնյակների թվաքանակի գերակշռման երևույթի հայտնաբերում

52

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում ալրոցեսները նշտարիկի անհատական զարգացման սաղմնային շրջանի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սաղմնային թերթիկների երկու շերտի առաջացում
2. միաշերտ սաղմի առաջացում
3. հյուսվածքների և օրգանների ձևավորում
4. երկու իրար հաջորդող բաժանումներ միջօրեականի հարթությամբ
5. բլաստոմներների տրոհում լայնակի հարթությամբ
6. սաղմնային թերթիկների բջիջների մասնագիտացում

53

### Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. ողնաշարի պարանոցային և սրբանային կորություններն ուղղված են դեպի առաջ
2. արյան II խումբ ունեցող մարդկանց էրիթրոցիտների թաղանթներում առկա է A ագլյուտինոգենը, իսկ պլազմայում՝ β ագլյուտինինը
3. մարդու կրծքավանդակում կողոսկրերը շարժուն միացած են կրծոսկրին
4. դելտաձև մկանը տեղակայված է թազկային հողի վերևում
5. սեղանաձև մկանը կծկվում է թիակներն իրար մոտեցնելիս և գլուխը դեպի հետ թեքելիս
6. ֆիբրինոգենը կատալիզում է թրոմբինի վերածումը թրոմբի

54

### Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ոիբրոսմի բաղադրության մեջ սպիտակուցների և Ο-ՆԹ-ի քանակությունները գրեթե հավասար են
2. վիրուսային մասնիկում Ω-ՆԹ-ի կրկնապատկման գործընթաց է կատարվում
3. ԱԵՖ-սինթազ ֆերմենտի մոլեկուլները ներկառուցված են միտոքոնդրիումների արտաքին թաղանթներում
4. լիզոցիմը բերում է բակտերիաների ոչնչացման՝ քայլայելով կապերը բջջապատի ածխաջրերում
5. Էներգիական փոխանակության թթվածնային փուլում, երբ պրոտոնային պոտենցիալը միտոքոնդրիումի ներքին թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ թաղանթի արտաքին մակերևույթից դեպի ներքին մակերևույթ
6. ջրի հետ փոխազդեցության արդյունքում ԱԵՖ-ի ածխաջրի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի

55

### Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. տրամախաչումը հանգեցնում է ժառանգական փոփոխականության և բնական ընտրության արդյունավետության մեծացման
2. մարդկանց ականջի մազակալումը պայմանավորող գենը ժառանգվում է հայրական գծով
3. համակցական փոփոխականության հիմքում ընկած է ոչ հոմոլոգ քրոմոսոմների միջև հատվածների փոխանակումը
4. Էնտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում ձևավորվում են մկանները, աղիները, երիկամները
5. ցենտրիուլների կրկնապատկումը բջջի կենսական ցիկլի ժամանակ տեղի է ունենում ինտերֆազի G<sub>2</sub>-փուլում
6. Պատառի սինդրոմը գենում կապված է նուկլեոտիդային հաջորդականության փոփոխության հետ
7. բողբոջմամբ են բազմանում հիդրաները և բարձրակարգ բույսերը

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- քեմոսինթեզի ճանապարհով առաջացած էներգիան էկոհամակարգերի կողմից չի օգտագործվում
- մթնոլորտում կյանքի վերին սահմանները հասնում են մինչև օգոնային շերտ
- միջատների ծծող տիպի բերանային ապարատի առաջացումը արումորֆոզի օրինակ է
- ընդհանուր դեգեներացիան դիտվում է էպիֆիտ բույսերում, որոնք կորցրել են ֆուտոսինթեզ կատարելու ընդունակությունը և գոյատևում են ծառաբույսերի հաշվին
- կենդանի նյութի միջավայրագոյացնող ֆունկցիայի հետ է կապված կենդանի նյութի ազդեցությունը լանդշաֆտների ստեղծման վրա
- ատավիզմները մարդու անհատական զարգացման՝ ֆիլոգենեզի խանգարումների արդյունք են
- բնաթուային օրգանիզմները հիմնականում կենդանիներ են և բակտերիաներ, որոնք քայլայում են ծովի հատակին հասած օրգանական նյութերը

## Նշել նարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է բոքերի կենսական տարրություն
- բոքաբշտերի պատերը կազմված են միաշերտ էպիթելից, բարակ առաձգական բելերից, պատված են արյան մազանոքներով
- բոքամզի բոքային թաղանթը պատում է կրծքավանդակի պատերը ներսից
- երիկամի նեֆրոնի պատիճում տեղի է ունենում ֆիլտրում և առաջանում է երկրորդային մեզը
- երկրորդային մեզը միզածորանով լցվում է երիկամի ավագան
- բուն մաշկում գտնվում են քրտնազեղձերը, մազարմատները, ընկալիչները
- կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, եթե մթնոլորտային օդը բափանցում է բոքեր

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- անձրևորդի կերակրավողի մեջ բացվում են կրային գեղձերի ծորանները
- պոլիա հիդրան բազմաթիզ, եռաշերտ կենդանի է, ունի մարմնի խոռոչ և երկկողմանի համաշափություն
- բոչունների փետուրները կազմված են եղջերային նյութից
- շների, ձիերի անրակները թերզարգացած են կամ բացակայում են
- բոչունների կրնկաթաթն առաջացել է դաստակի մի քանի ոսկրերի միաձուլումից
- եթե պոլիա հիդրայի խայթող բջիջը ոչնչանում է մաշկամկանային բջիջը առաջանում է նոր խայթող բջիջ
- բրուցելյող հիվանդության հարուցիչները բակտերիաներն են

- (59-60) Գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է  $380 \text{ мол}$   $\text{H}_2\text{O}$ , և թթվածնային փուլի էներգիայի կորուստը կազմել է  $12160 \text{ кДж/моль}$ : 1  $\text{моль}$  գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է  $200 \text{ кДж/моль}$ , իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է  $30 \text{ кДж/моль}$  էներգիա:

59

Քանի՞ մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում:

60

Քանի՞ կԴոուլ է կազմում էներգիայի կորուստը անթթվածին փուլում:

(61-62) Մարդու ընդունած սննդի էներգիական արժեքը 25418,75 կՋ է: Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացել է 1660 գ քրտինք:

61

Որոշել, սննդից ստացված էներգիայի ո՞ր տոկոսն է ծախսվել քրտինքի գոլորշիացնան վրա: Հաշվի առնել, որ 1 գ քրտինքի գոլորշիացնան համար օրգանիզմը ծախսում է 2,45 կՋ էներգիա:

62

Աշխատանքի ժամանակ քանի<sup>o</sup> միկրոզրամ քրտինք է հեռացվել մարմնի մակերևույթից մեկ քրտնագեղձով:

- (63-64) Մարդկանց կատարակտը և բազմամատությունը ժառանգվում են որպես առևտուսումային դոմինանտ շղթայակցված հատկանիշներ և միասին չեն տալիս վերահամակցված ձևեր:

63

Կինը, որը հորից ժառանգել էր երկու արատներն էլ, իսկ մայրը նշված հատկանիշներով առողջ էր, ամուսնանում է առողջ տղամարդու հետ: Ինչպիսի՞ հավանականությամբ (արտահայտված տոկոսներով) այդ ընտանիքի հաջորդ երեխան կարող է ունենալ երկու արատներն էլ:

64

Տղամարդը, որը կատարակտը ժառանգել էր հորից, իսկ բազմամատությունը՝ մորից, ամուսնանում է առողջ կնոջ հետ: Ինչպիսի՞ հավանականությամբ այդ ընտանիքի հաջորդ երեխան կարող է ունենալ երկու արատներն էլ:

65

100 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում կլանվել է 132 կգ CO<sub>2</sub>: Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (մ<sup>2</sup>):

- (66-68) Մարդը 6 ժամվա ընթացքում կատարել է ծանր ֆիզիկական աշխատանք: Արթուն է եղել 14 ժամ: Աշխատանք կատարելիս շնչառական շարժումների արագությունը և շնչառական օդի ծավալն աճում են 2 անգամ, և աշխատանքի ընթացքում օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճում է 25%-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է:

66

Քանի<sup>o</sup> լիտր արյուն է արտամղվել առրտա արթուն վիճակում, եթե աշխատանք կատարելիս մարդու սրտի կծկումների հաճախականությունն աճում է 2, իսկ յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,5 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում սիրտը մեկ րոպեի ընթացքում կծկվում է 75 անգամ, և յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 70 մլ արյուն:

67

Որոշել՝ քնած ժամանակ մարդու օրգանիզմում քանի<sup>o</sup> լիտր թթվածին է յուրացվել:

68

6 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում քանի<sup>o</sup> լիտր թթվածին է յուրացվել օրգանիզմի կողմից:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. հետերոզիգոտ առանձնյակների միահիբրիդային խաչասերման արդյունքում ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում 1:2:1 հարաբերությամբ ճեղքավորում տեղի է ունենում միայն ֆենոտիպորեն, իսկ գենոտիպորեն ճեղքավորումը համապատասխանում է 3:1 հարաբերությամբ
2. AABB x AaBb խաչասերման արդյունքում երկու ալելով էլ ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում, ստացվում է 1:1:1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
3. Երկհետերոզիգոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, գույգ ալելների ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ
4. հետերոզիգոտ առանձնյակների միահիբրիդային խաչասերման արդյունքում լրիվ դոմինանտուրյան դեպքում սերնդում ստացվում է 1:2:1 ճեղքավորում՝ և ըստ գենոտիպի, և՝ ըստ ֆենոտիպի
5. արուները և էզերը տարբերվում են միայն մեկ գույգ գեներով, որոնք պայմանավորում են այս կամ այն սերի պատկանելիությունը և շղթայակցված են առոտոսմային քրոմոսոմների հետ
6. գիշերային գեղեցկուիի բույսի վարդագույն ծաղիկներով առանձնյակների խաչասերումից սերնդում ի հայտ է զալիս ճեղքավորում ըստ ֆենոտիպի 1:2:1 հարաբերությամբ

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. քի բաղադրամասերից են սպիտակուցային բնույթի մուցինը, մանրէասպան լիզոցիմը, մալթազը
2. ողնուղեղի կրծքային հատվածներից ուղարկվող նյարդային ազդակները խթանում են մարսողական գեղձերի հյութազատությունը
3. լեղապարկում արտադրվող լեղին նպաստում է ճարպերի մարսմանը
4. ըմպանը մկանային օրգան է, որը միացնում է բերանի խոռոչը կերակրափողին
5. քրում պարունակվող անօրգանական նյութերից են իմունոգլոբուլինները, միզանյութը
6. հարականջային թքագեղձերը արտադրում են սպիտակուցային բուր